

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ն. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Եամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք ուղղել առ

ձեռիւն ԱՐՇԱԼՈՅՍ Քաղաքի

ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան ողջ դասիկն 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՐ

Տարեկան Ձրակն 20

Վեցամսեայ « 12

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած
գրութիւնք է՝ չ'են տրուիր

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԽՄԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ Պատ. բաժն.

Ընդունելի ջերմաստիճան կը խնդրուի որ բաւ-
րինաձեւ ճարտար սարիէն մնացեալ պար-
տաւ կցեղով որկել ճառ իրեանց ԵՐԿՐՈՐԷ
Տարեշրջանի բաժնաւորագրիւնք, եւ հարկ
չ'ը բողոջ մասնաւոր դիմումներու, որով
կոր դժուարութիւն մը պիտի ըլլայ ԱՐՇԱ-
ԼՈՅՍԻ արդէն բազմապաշտ ձեռիւնութեան :

ՔԱՆՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ

Այս նոր դարը մեր առջև կը տա-
րածուի չ'խուղարկուած երկրի մը պէս իւր
բոլոր կարելիութիւններովը : Բաներորդ
դարը ինչե՞ր պիտի ծնանի, ինչ արդասիք-
ներ պիտի արտադրէ : Ա՞յ կրնայ գուշա-
կել այն փոփոխութիւնները որ պիտի տե-
լի ունենան յառաջիկայ հարիւր տարիներ
ու ժամանակամիջոցին մէջ :

Եւ ի՞նչ պիտի ըլլայ աշխարհի վիճակը և
մարդկութեան կացութիւնը այն ատեն ուր
մարդիկ պիտի ողջունեն քսանմէկերորդ
դարուն երևումը : Ի՞նչ պիտի ըլլան քա-
ղաքական և աշխարհագրական փոփոխու-
թիւնները . ո՞ր տերութիւնները որ այսօր
մեծ կը կոչուին և քաղաքական աշխարհի
մէջ առաջնակարգ դերք մը կը բռնեն, պի-
տի մերկանան իրենց փառքէն և ըլլան լոկ
երկրորդական պետութիւն մը : Եւ ո՞ր ան-
նչան ժողովուրդ որ այսօր հայիւ թէ ա-
նունով ծանօթ է քաղաքակրթեալ աշխար-
հին մէջ, պիտի մեծ գերեր կատարէ քը-
սաներորդ դարուն թատերաբեմին վրայ :
Աշխարհագրութեան քարտէսներուն վրայ
ի՞նչ նոր գիծեր պիտի քաշուին և գոյնե-
րու ի՞նչ տեղափոխութիւններ պիտի ունե-
նան : Գիտութիւնը մինչև ո՞ր աստիճանի
պիտի հասնի, ի՞նչ նոր գիտեր մարդիկ
պիտի զարմացնեն : Վաճառականութիւնը
ո՞ր աստիճանի պիտի յառաջանայ . հարստու-
թեան ի՞նչ նոր գանձեր պիտի գտնուին .
կենցաղի դերութիւնները դեռ որքա՞ն պի-
տի բազմապատկին : Հնարաւորութեան սահ-
մանէն անդին երկնայ թռիչքներ ի-
րականութիւն պիտի գտնեն . բանականու-
թեան իշխանութիւնը նիւթին վրայ պիտի
աւելնայ այն համեմատութեամբ, որուն
իննետասներորդ դարը հանդիսատես եղաւ
և մարդկային հմարութեան հորիզոնը պիտի
ընդարձակի նոյն հսկայ քայլերով : Եթէ

այս վերջացող դարուն մէջ տեսնուած յա-
ռաջիմական շարժումը նոյն համեմատու-
թեամբ շարունակուի, մարդու հոգեկան
մտաւորական և ֆիզիքական կարմութեանը
վրայ ի՞նչ ազդեցութիւն պիտի ընէ : Հա-
րիւր տարի վերջը մարդ աւելի առողջ և
զօրաւոր, աւելի մտացի և իմաստուն, ա-
ւելի հաւատացեալ և առաքինի պիտի ըլ-
լայ, թէ գիտութիւնը զայն այլասեռելով
հակառակ ուղղութեան մը պիտի մղէ զին-
քը : Այս և ասոնց նման հարցումներ կը
ծագին ամէն խորհողի մտքին մէջ այս օ-
րերս՝ երբ հրաժեշտի ողջոյն կուտանք մէկ
դարուն և բարի դարուստ կը մագլթենք
միւսին : Այս հարցումներուն պատասխա-
նել սակայն խիստ դժուար խնդիր մըն է,
եթէ ոչ անկարելի . նկատելով որ՝ ո՞չ
մի դար իր յաջորդին նման եղած է ան-
ցեալին մէջ . ինչպէս որ տասնութերորդ
դարը տասնութերորդին հաւասարիմ և
արժանի յաջորդ մը չ'եղաւ, կրնայ նմա-
նապէս յառաջիկային մէջ աշխարհի արա-
դընթաց յառաջադացումը կանգ առնել
և քսաներորդ դարը ներկայացնել ապա-
գայ սերունդներուն իբր անբերրի դար մը :
Սակայն քսաներորդ դարը պիտի ըլլայ
ինչ որ արդի սերունդը պիտի ընէ զայն :
Մենք ինչ որ սերմանենք հիմա՝ նոյնը պի-
տի հնձեն դեռ չ'ծնած սերունդները և ա-
նոնք մեզ պիտի դատեն այն պատուին հա-
մեմատ՝ զոր մեր աշխատութիւնները պիտի
արտադրեն : Այն գործերը ոչ ապրող սե-
րունդը կը կատարէ՝ պիտի ձեռակրպէ ա-
պագան : Այս մեծ պատասխանատուութե-
նէն փախչել չենք կարող : Ինչպէս որ մեր
նախնի հայրերուն հաւատքը, բնաւորու-
թիւնը և սովորութիւնները ժառանգեցինք
և մեր կացութեան հիմը կը կազմեն ա-
նոնք, նոյնպէս և մենք մեր գործերովը
ժառանգութիւն մը կը թողունք մեր զա-
ւակաց զաւակներուն, որ պիտի նախա-
սահմանէ անոնց նկարագիրը և կարողու-
թիւնը :

Մարդկային կենաց մեծագոյն օրհնու-
թիւններէն մին ալ այս է որ մարդ անշատ-
եալ դերք մը չունի այս աշխարհիս վրայ .
անիկա կապուած է անցեալին և ապագա-
յին հետ զօրաւոր կապերով և անցեալէն
դէպի ապագան յառաջացող ընդհանուր
շարժման միջին օղակը կը կազմէ : Պէտք
է որ շարժիւնք, կամայ ակամայ . ստիպ-
ուած ենք իմաստով մը թողուլ ետեւինները
և յառաջանալ առջևիններուն : մեր դա-
ւանած կրօնքը յառաջիմական կրօնք մըն
է և անոր մէջը չկայ բառ մը մեզ կատեց-

նող . Չինաստանցիք կաշկանդուած են ի-
րենց կրօնքին սկզբունքներովը, որ կը
սորվեցնէ պաշտել իրենց նախնիքները :
Հինաստները տողորուած են այն յեազի-
մական համոզումներով թէ՛ այս ներկայ
կեանքը մարմնացումն է նախորդի մը :
Մուհամմէտի կրօնքը նմանապէս կը սորվե-
ցնէ ա՛յնպիսի գաղափարներ և դաւանու-
թիւններ որ չեն կրնար փոխուիլ կամ ըն-
դարձակիլ և այս է պատճառը որ Չինաս-
տանցիք և մահմետականները ամենատարին
դերք մը կը բռնեն աշխարհի յառաջիմա-
կան շաղկին մէջ : Իսկ մենք՝ Հայերս, պէտք
չէ որ անոնց նմանող ըլլանք . թէև նա-
խախուժութիւնը մեզ յառաջիմութեան թըշ-
նամի դրացիներով շրջապատած է :

[Մնացեալը յաջորդով] ***

ՃԱՄԱՐՈՒԹԻ ԾՈՒՇԱՑՆԵՐ

ՄԱՐՍԻԼԻՈՑ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԸ

Ժամանակէ մը ի վեր Մարսիլիա փրկու-
թեան վայր մը եղած է փախստական Հայերուն
համար : Մանաւանդ վերջերս Խարբերէն, Մա-
լաթիայէն, Տիգրանակերտէն, Արարիկիւն ու այլ
և այլ քաղաքներէ կուգան կը լեցուին Մար-
սիլիա ու ապա կը մեկնին Ամերիկա :

Արգարեւ չեմ կարող այնքան սիրտ խշխշա-
ցնող տեսարան մը երեւակայել, որքան Պեղիօնս
փողոցի թիւ քառասուն Հայկական պանդոկները :

Այս բաւական մեծկակ հաստատութեան մէջ
խմրուած են տառապող ազգի մը խեղճ ու կրակ
բեկորները . աղար ու անկարող ծերեր, տարի-
քոտ կիներ՝ հոս հոն քուշի կադրի մը վրայ եր-
կընցած կը քնանան . առոյգ ու կորովի կրի-
ստապաղներ ոտքերնին բոպիկ, հագուստին
պատառած, խումբ խումբ նստած, արևնոտ
անցեալին, յուսահատ ներկային ու անորոշ
ապագային վրայ կը խօսակցին և որոնք պիտի
երթան Ամերիկայի մութով ու ծուխով լեցուն
գործարաններու մէջ իրենց ուժը չափել մեքե-
նաներու հետ . չափահաս օրիորդներ, գաւառա-
կան համեստ տարազով, որոնց գաւառացի
աղուոր, ամչկոտ գէմքին վրայ անորոշ կեանքի
մը տխրութիւնը կը ցուայ, ասոնք ալ պիտի
երթան օտարութեան մէջ իրենց կեանքի սերուն
ծողիկը թառամեցնել . ու մանուկներ՝ բոլոր-
վին անգիտակ կեանքի գառնութեան մշիկ մշիկ
կը քնանան մօլերնուն գրեկը :

Կը խորհիմ թէ՛ ի՞նչ պիտի ըլլար արգեօք
այդ խեղճ ու անլեզու ժողովուրդին վիճակը,
եթէ Պ. Յ. Գաբաթէքէանը չ'ըլլար : Ապա-
հովաքար եւ ոչ մի պանդոկ պիտի ուզէր հիւ-
րընկալիլ այդ խեղճ ու կրակ ճամբորդները ու
եթէ հիւրընկալէր իսկ, չի պիտի ուզէր վարկ
տալ անշուշտ, մինչև իրենց զբամի ժամա-
նումը :

Բայց այդ անձը ստորոջ կրկու երեք շաբաթ կը խնամէ, կը պատասխարէ, ամեն գիւրութիւն կ'ընձևո՞ւնէ, մինչև որ իրենց զատակէն, հօրմէն, ամուսինէն, եղբայրէն, ազգականէն կամ բարեկամէն դրամ գայ ու ճամբէ գանոնք, անշուշտ իր աշխատութեան վարձքը ստանալով:

Սակայն Մարտիկոյ Հայ ջոջ ազաները, միշտ անտարբեր մնացած են այդ խնդրուհանդէպ ու չեն ուզած հետաքրքրուիլ քթերնուն տակ գանուած թշուառութիւնով, որ մանրանկարն է Հայաստանի մէջ եղածին. ու չեն փափաքած բնաւ բարի Սամարացիներ ըլլալ իրենց եղբայրներուն վէրքերը մասամբ գարմանելով:

Անկեա՛լ ժողովուրդ (*):

Հասկա որչա՛փ պախարակելի է Եւրոպայի ընդհանուր Հայոց այցելու Առաջնորդ Գեորգեայի կողմէն ընթացքը, որ հակառակ իր պաշտօնին, հակառակ իր կոչման ու քարոզած կրօնքին թէ՛ «Հովիւ քաջ գանձն իւր դնէ ի վերայ իւր հօտի», երբէք չ'այցելուի, չի մխիթարուի, չի քարոզուի ու չի զօրացնուի այդ խնդրանքը կրօնի խօսքերով, որոնք պէտք ունին միշտ: Ահա թէ ինչո՞ւ ժողովուրդ մը կը թեւորանայ իր պաշտած կրօնին մէջ ու այլ եւ այլ կրօնքներու կը յարի (1):

Եւ միթէ՞ հեշտ ու արդարանալի չէ՞ այդ տեսակ ժողովուրդի մը մոլորութիւնը:

Սյդ տեսակ կրօնաւորներն են սովորաբար, որոնք ժողովուրդի մը կորստեան պատճառ կ'ըլլան եւ որք զժբաղդաբար բաւական մեծակաթիւ մը կը կազմեն մեր մէջ:

(1) Ինչ որ ալ ըլլան առաջնորդներու, տէրաէրներու եւ ուրիշներու ընթացքը, մենք իրաւունք չենք տար որ ուրիշ կրօնի, մանաւանդ ըր՛խաչող չափ առաջ գացող՝ թոյլ, աչինչ ու անպիտան մարդիկ գանուին հայոց մէջ: Այդպիսիներուն խորհուրդ կուտանք՝ եթէ լսել գիտեն, որ փոխանակ կրօնափոխութիւնը ընդունելով բարոյապէս անձնասպան լինելու, քաջութիւնը ունենան բաղդին հարուածոց դէմ սողալ. չարերը վանել իրենց մէջէն, եւ իրենց ըսկըզունքը ու կրօնքը ց'կեանս պաշտպանել. այն ատեն միայն կրնանք մարդ անուանել հայերու այդ դասակարգին պատկանողները: Ծ. Խ.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Ժ Ի Լ Պ Լ Ա Ր Թ Ի (6)

ՍԻԿԱՐԷԹԸ

(Շարճ. նախորդ քիւնն եւ վերջ)

Զօրավարին այնպէս կուգար թէ՛ կը ինդզուէր, կարծես մղձաւանչ մը զինքը շնչանդձ կ'ընէր, իր ձերմակ գլխուն մէջ սեւ աչքերը կըսկի պէս կ'այրէին, միայն բաւականացաւ կրկնելով.

—Ի՞նչն սա բանը ըրիր, գու՞ն, վերաւորեալի՛ մը

Այն ատեն ժուան խելացնորած յիմարի մը պէս խօսելով ըսաւ թէ Բէքան ունենալու համար ուրիշ շատ բաներ ալ կ'ընէր, թէ Հայր Շէկարէյը 2000 տուրօ օժիտ կ'ուզէր եւ այդ երկու հազար չուրօն ունենալու միջոցը այդպէս գըտած էր: Ատիկէց զատ — զօրավարը ինքը ըսած էր արդէն — այդ Մուքարրակիան դեռ շատ մարդոց, շատ մը քաջերու մտնուան պատճառ պիտի ըլլար:

—Պատերազմին մէջ, այո՛, ըսաւ յանկարծօրէն կարբիտօ:

Բայց ասիկայ պատճառաբանութիւն մը չէր Արագուիլի համար. այդ բանը ընելուն միակ պատճառը Բէքանի վրայ ունեցած չափազանց սէրը, տարփանքն էր. Բէքան կ'ուզէր. Մուքարրակայի կեանքը զայն իրեն կուտար. աղէկ ըրած էր. անաւտիկ ամբողջ իրողութիւնը:

Գերապ. Առաջնորդը, բաց ի ջոջերէն, որոնք անշուշտ խնամով արձանագրած է իր սուամարին մէջ, չի գիտեր նոյն իսկ թէ՛ որքան Հայ գաղթականութիւն կայ Եւրոպայի մէջ, եւ ի՞նչ հարկ կայ գիտնալ, քանի որ իրեն պէտք եղածը . . . կայ:

Որքան մեծ տարբերութիւն միմիայն Բարիկ Հայոց հոգեւոր հովիւ Առաջնորդէն քահանայի մը եւ Եւրոպայի ընդհանուր Հայոց հովիւ եպիսկոպոս Առաջնորդի մը մէջ:

Ուրեմի խեղճ ու թշուառ ժողովուրդ, գացէ՛ք Ամերիկայ, այդ նորութեան երկիրը, չարչարուեցէ՛ք, աքնեցէ՛ք, ձեր առողջութիւնը վրայ տուէք, բայց միայն յիշեցնելու շահեցէք ու այնպէս վերադարձէք եւ այն ատեն կ'ընդունիք Սրբազանին եւ ուրիշներու այցելութիւնը ու փոխադարձ կ'ընդունուիք սիրով:

Ո՛վ մեծագոր դրամ. քեզմով ի՞նչ հրաշքներ կը գործուին ու դեռ պիտի գործուին ալ. . . .

Մ. ՄՈՋԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ազի. քսանդրիայէն կը գրեն մեզ.

Անդրոյ Ընդհանուր Հիւպատոս Պ. Կուլտ, անցեալ ուրբաթ օր Այդ. Առաջնորդարան այցելութեան եկաւ, ընկերակցութեամբ իր առաջին թարգմանին եւ շնորհակալութիւն յայտնեց տեղւոյս Հայ հասարակութեան կողմէ Անդրոյ Թագուհույն մահուան առթիւ արտայայտուած ցաւակցական զգացմանց համար:

Փետրուար 10ի կիրակի օրը, Ազի. քսանդրիայ Մ. Պօլսոս Պետրոս եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգ գըտեան պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ Վիթթորիա Թագուհույն:

Այժմէն մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնուին այդ հանդէսին համար:

ԱՆԻՒԻՈՅ Վեհափառ Թագուհույն մահուան առթիւ, Ազի. քսանդրիայ այդպէս: ցոյց տուած համակրալից արտայայտութիւնները տեսնելով, կը կարծէինք թէ՛ Գահիրէի Ազգ. Առաջնորդարանն զանաւր կարբիտօ խօսապատ էր. Արագուիլ կը ներկայանար եւ իրաւունքը կը պահանջէր:

Զօրավարը «ճիշտ է» պատասխանեց. Բէքան ընակած տեղը հարցուց, թիկնապան մը կանչեց, հասցէն տուաւ եւ Արագուիլը ցուցնելով ըսաւ.

—Սա մարդը (պետնայարկ) Fonda del Sol տարէք եւ վաղը ողորմաբաշխին իմաց տուէք, ամուսնութեան մը համար. օ՛ն

Գիտնայարկին մէջ անցուցած գիշերը — փոստան պահականոցի փոխուած էր այդ գիշերը — շատ երկար երեւցաւ Արագուիլի: Գիշեր մը, զանազալ ու ձանձրանալի գիշեր մը. հեռուէն շուներու կաղկանցումները կը լսուէին. կաղկանցումներ՝ որք մահ կը հոտէին. իսկ նեւուն Գարբիտան յառաջապահներուն մօտ հրացանի հարուածներու ձայնը որոշապէս կուգար ականջին:

Առաւօտուն թեթեւօրէն մրափեց, Բէքային վրայ երազելով, այնպէս կ'երևար թէ՛ ձեր Շէկարէյին նիհար ձեռքին մէջ սոկիներ կը գնէր, սոկիներ՝ որք կենդանիի մը օժիտը եւ գիտակի մը գինն էին:

Շատոնց լուսցած էր երբ յիսնապետի մը հրամանատարութեան տակ ջոկատ մը եկաւ զինքը փնտրուելու. ո՛վ կ'ուզէր զինքը. զօրավարը, Ատիկէց զատ յիսնապետը Արագուիլի խօսքերուն չ'էր պատասխանէր:

Հեռանիկ պողոտայէն անցան, խիտ խիտ իրարու վրայ խոնուած, պատերու աւազաքարերուն մէջ քանդակուած հին նշաններով եւ գեղին, կապոյս վանդակներով (Moucharaby)

փոխանորդ կարգած եւ ինք ձեռքերը ծալած նստած է. բայց մեր ստացած վերջին տեղեկութիւնները՝ մեր այդ կարծիքը չեն հաստատուեր:

Գեր. Յովսէփ եպիսկոպոս Այվազեան, յանուն Եգիպտոսեան Հայ գաղթականութեան, ցաւակցական հեռագիր մը ուղղած է Լինքոնի Արքայական գերդատանին, Վեհ. Թագուհույն մահուան առթիւ. կը յուսանք թէ՛ պիտի արժանանանք այս էջերուն միջոցաւ մեր ընթերցողաց ջանքերով Արդունեաց տուած պատասխանն, նորին Գերապատուութեան հեռագրոյն պարունակութեան հետ:

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՅ ՈՐԱՍՈՒՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ ԱԼ միւսնայն տխուր առթիւ Անդրիերէն լեզուա հետեւալ հեռագիրն ուղղած է Ն. Վ. Ուինկէթ Սէրտարի:

ԹԱՐԿՄԱՆՈՒԹԻՒՆ ԶԵՆՈՒԳՐՈՅՆ «Սըր Բէքանալա Ուինկէթ Սէրտար, Խարթում»

«Յանուն Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան՝ կը փութանք Ձեր Վեհ. մութեան մատուցանել մեր ամենախորհն ցաւակցութեան անկեղծ եւ յարգալիր հաւաստին, առթիւ դառնաղէտ սուգին, որով համակուած է այս պահուն Բրիտանական ազգը:

«Տիեզերք համայն, այսպիսի անողորք մի կորուստով, զրկուեցաւ տարիներով ու փառքով պսակազարեալ Թագուհիէն՝ մինչ այնպիսի անբաղդներ — աղքատները, այլիները ու որբերը — կուլան մահը, յաւեալ ողբացեալ առաքինասէր մօր մը»:

«Միշտ օրհնեալ ըլլայ անոր յիշատակը»:

ՊԱՏԱՍԽԱՆՆ «Ատենապետ Որբասիրաց Ընկերութեան Առաքել Մ. Պէրպէրեան Գահիրէ»

«Շնորհակալութիւն Ձեր ցաւակցութեան նըքիմաստ հեռագրին համար, առթիւ Թագուհույն մահուան. արդէն հա-

զօրուած տուններու առջեւն անցան եւ մեծ հըրպարակը հասան. Գեղեցիկ օր մ'ըն էր, ըսքանչելի արեւ մը եկեղեցիին չէկ պատերուն եւ քաղաքատան, հորեկէ այրած, սեւցած ու փլիքած որմերուն վրայ կը խնդար: Հրապարակին վրայ ասեղ ձգելու սեղ չ'կար, զինուորները շարուած էին եկեղեցիին մայթին քովը. կարբիտօ խիտ ափոյն, մեծ համազգեստով, ըսպաններ իր քովը ձիւ վրայ նստած եւ քանի մը քայլ անդին՝ տօնի հագուստի սեւ քոլին մէջ սրբուհիի մը պէս գեղեցիկ Բէքան Հայր Շէկարէյի քով կանգնած էր:

Արագուիլ ակնարկով մը ամեն բան տեսաւ. հաւաքուած զօրքերը, իրենց արեւին տակ շողողացող սուրիներով, զօրավարը, գեղեցիկ աղջիկը եւ անդին եկեղեցիին բաց դրան խոր մտմամբ խորան մը. լոյսով եւ սոկիով փալվըլուն խորան մը

Չայն կարբիտօի առջեւը բերին: Արագուիլ Բէքանի վրայ խոր ակնարկներ կը նետէր եւ աղջիկը իր խիտ արտեւանունքներով ստուերած սեւ աչքերովը զայն կը գիտէր սարբիտակ երեւոյթով մը. ժուանի երեւցաւ որ ձեռքը բռնած սոկեզօծ պատարագի գերքը — որուն վրայ երգուած էր իրը ըլլալ — օրբորդին սեւ ձեւնոցներով ծածկուած ձեռքին մէջ կը պողպար:

—Զօրավարը «քահանան կանչեցէ՛ք» ըսաւ. Գահանան որ կարծես թէ զօրավարին հըրամանին կ'սպասէր, եկեղեցիին սանդուխներուն վրայ երեւցաւ — ձերմակ շուրջառով քահանայ մը, որ արձանի պէս անշարժ, սեմին վրայ կանգ-

« զորդած եմ յարգալիք վշտակցութեան » մը արտայայտումը, նորին կայսերական « գերդաստանի անդամներուն »:

Ուրիշ:

ԱՅՍՕՐ ժամը 11 ին վեհափառ թագուհւոյն թաղման առթիւ, Պալատի Անգլիական եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր հագեհանգստեան պաշտօն կատարուեցաւ:

Քաղաքիս բոլոր պաշտօնական անձնաւորութիւնք և երեւելիները ներկայ էին. ամեն ազգ իր յատուկ ներկայացուցիչներն ունէր. շատ մը կարևոր վաճառատուներ փակուած էին ի յարգանս թագուհւոյն:

Ժամը 11 ին ատենները միջնաբերդէն թնդանովի հարուածներ գոռացին, նորին վեհափառութեան թաղումը ծանուցանող:



Ակնայ Որբախնամ Ընկերութեան տարեկան Ընդ. Ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակէ 3 Փետր. 1901, Կէս օրէ վերջ ժամը ճիշդ 2ին, Էօղպէքլէի պարտիզին դիմաց « Քաջէ տը լա Պուրս » ի մօտ, Պէհէրա Պառի մէջ, Օրակարգ ունենալով:

1. Միամեայ հաշուետուութիւն.
2. Ընտրութիւն Մայր Դիւանի.
3. Ընտրութիւն Գործ. Ժողովոյ:

Կը խնդրենք որ հաճիք անվրէպ ներկայ գտնուիլ, սրովհետեւ ներկայից թիւրբաւ համարելով ընտրութիւնք պիտի կատարուին:

Ի գիտաց Ակնայ Որբախնամ Ընդ. Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. ԷՄԻՆՔԱՆ Ս. Գ. ՓԱՓԱՋԱՆ
Գահիրէ 2/2/901

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պոլիս 29 Յունուար. — Կալաթաի

նեցաւ — մինչդեռ զանգակատան ծանր զանգերը զուարթութեամբ կը զողանէին և իրենց թընդանօթի բերաններով աստիական օրերու ովսաննան, ամուսնութեան զուարթ երգը, երջանիկներուն երգերը կ'երգէին...

— Թիպուրչիօ Շէկարէյ ըսաւ զօրավարը. խօսքը ծիր տղարկատէրին ուղղելով — անաւասիկ ժուան Արագուիլը ձեր պահանջած 2000 տուրք օժիտով. խօստացուածը պարտի տրուիլ. կը հաւանիս Արագուիլի ձեր ազնկան հետ ամուսնանալուն:

Մեր Շէկարէյ կերկեր ձայնով մը « այո » պատասխանեց:

— Ժուան Արագուիլ, ըսաւ Կարբիսօ — կը հաւանիս Բէրա Շէկարէյը կինդ տանելու:

— Այո՛ ըսաւ ժուան, կուսնորուն ձայնով մը, և այդ « Այո » ին մէջը իր ամբողջ կեանքը զրած էր:

Քահանան կ'սպասէր պատրաստ, պատկերու. — Բէրա՛ Շէկարէյ, հարցուց զօրավարը. մանկամարտ աղջկանը զանախով — կը հաւանիս նոս ներկայ գտնուող, ժուան Արագուիլը ամուսին անելու:

Բէրա երկու քայլ յառաջացաւ դէպի ժուան, իր գեղեցիկ, սեւ աչքերը անոր վրայ բարձրացուց և պատասխանեց:

— Ո՛չ:

Չիւստիներուն ետեւը տմբոխին մէջ զայրոյթի ունոց մը բարձրացաւ. սոսկալի ա՛ն մը, մինչ զինուորները անշարժ կը նայէին:

— Ո՛չ, կրկնեց երկասարգ աղջիկը, ձայնը

և բոլոր քաղաքի թաղերուն մէջ պատերուն փակցուած ձեռագիր յայտարարութիւններ գտնուած են, որով Սուլթանին դէմ ապրտամբելու կոչ կը լինի ժողովրդին:

Կ. Պոլիս 30 Յունուար. — Մեծ վէզիր Խալիլ Բեֆաթ Փաշա մեռած է. Պէրլինի մամուլը վրան շատ դովերտալից բաներ կը գրէ:

Միլան 30 Յունուար. — Ըստ վէրտի բազմանքին, իր յուզարկաւորութիւնը աւանց պաշտօնական արարողութեանց պիտի լինի:

Թրիէսթէի քաղաքապետութիւնը պսակ մը դնել տուած է վէրտի գազաղին վրայ. Յուզարկաւորութեան հանդիսին ահագին բազմութիւն ներկայ էր:

ՏՕՐԹ ՔՕՐՆՔԵԼՏ

ՎԱՍՏԱՆԱՎԱՆՆԱՅԻ ՀԱՄԱՂԱՐԱՆՆԵՆ

Նախկին ներքին Բժիշկ Վիէննայի գըլխաւոր հիւանդանոցներուն: Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական ակտի, կոկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց:

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 և 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 և 5, իր տունը Շէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ:

ՀՆԻՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՐԹ 1 ՓԵՏՐՈՒՍՐ 1901

198	8794	5088	633	2656	4527
2495	4541	819	11	6541	6622
1359	2176	1579	2270	2258	8151
9189	5197	839	254	7090	4675
	4325	628	9449		

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՌ ՊՐՆ. Գ. Ն.

Ազնիւ բարեկամս, Անշուշտ քիչ մը նեղացած ես նամակդ եր-

բարձրացնելով. երբում ըրի միայն թուրք ըլլալ և երբում ըլլալով՝ մարդու չ'պիտի ըլլամ. բայց երբէ՛ք վաճի մը չ'պիտի պատկանիմ:

Ժուան Արագուիլ զայն դիտած տեսնը քահանային շուրջառին պէս ձեռմով, խելագար և գաթան երևոյթ մը առած էր: Հետուն, շատ հեռուն, հովիտին խորքին, բլուրներու տակէն հիմակ տխրամածօրէն կը լսուէր զանգակի մը թախտալից ձայնը, մահազանգակի աղմուկը. մահը լացող կոչնակի մը երկար ողբը: Քարլոսեանները հոգեվարքներու աղօթքը կը հնչեցնէին. թոյնը իր ազդեցութիւնը կը կատարէր:

Եւ կ'ամոց կամաց, Հեռանալի զանգակները լսած էին կարծես իրենց կորզին ողջունել ուզելով մահամբձը. կարծես լուռ ու մունջ կը կենային, թող տալով որ միայն մահազանգակը հեռաւոր մահազանգակը հնչէր...

Ապա յանկարծ մահազանգակը դադարեցաւ, և բազմութեամբ լեցուած հրապարակին վրայ լուռութիւն մը տիրեց, կարծես թէ այդ գլուխներուն վրայ հովը շնչած ըլլար թէ՛ անդին ամեն բան լինցած էր...

— Մուքորրական մեռա՛ւ... ըսաւ. ծեր Կարբիսօն: Արագուիլ տեսնաւ Բէրան կը դիտէր, պաղատելով անոր՝ իր նայուածքին մէջ կարգալ:

— Բեղի՛ համար, քեզի համար ըրի, ըսաւ վայրագօրէն:

Բէրա գլուխը անդին դարձուց: Չօրավարը այն տեսն պաղութեամբ ըսաւ Արագուիլի:

կար տեսն անպատասխանի թողելու համար. բայց վստահ եղիր թէ՛ պատճառը իմ անտարբերութիւնս չէր:

Գեկտեմեր ամսոյ (դուռի գործոց) հարբուխներէն ամենամատնելիին երթակայ եղած էի. Եթէ լոկ պարզ հարբուխ մը եղած ըլլար զարձեալ գոն պիտի մնայի, բայց դժբաղդարար անոր կցուած էր ակռայի սոսկալից ցաւ մ'ալ, ցաւ մը զոր ամօքելու համար տիեզերահաշակ Տօքթ. Պեռնի ամենաազդեցիկ գեղերը նոյն իսկ անօգուտ պիտի ըլլային:

Չարմանալին ս'ըր է. կարծես կոկորդս ալ չուզեց անտարբեր մնալ ցաւերու այս allianceին հանդէպ, զաշնակցելով հարբուխին ու ակռայի ցաւուն հետ: Երբեք նիզակակցութիւն մը կազմեց:

Ուղիղս, որ մինչեւ այն տեսն անտարբեր կ'սպասէր գլխու մէջ տեղի ունեցած այս լուրջ գործողութեանց հետեւանքին՝ կ'երեւի թէ հաճելի չի թուեցաւ իրեն տանոց նիզակակցութիւնը, ու անմիջապէս սկսաւ իւր տանանները պաշտպանել, պատրաստ գտնուելու համար ամեն յարձակմանց դէմ:

Ճաւերու այս վայրագ պետութիւնները սոսկալի պատերազմ մը սղեցին գտնելիս մէջ, հազար ու մէկ կտորներու բաժնելով միտքս, երբ գու անդին անհամբեր նամակիդ պատասխանին կ'սպասէիր:

« Անցեալին վրայ վերսկ մը ձգենք, մոռնանք զայն ու օրը օրին ապրինք » գրած էիր. անշուշտ պիտի ներես ինձ ի՞նչ ես ալ իմ կողմէն աւելցնեմ սա բաւերը. « Օրը օրին մտածենք և օրը օրին վարուինք »: Իրաւ է թէ այս դաղափարս ուղիղ տրամաբանութեան և լաւ դատողութեան հակապակերն է, բայց ի՛նչ օգուտ, ուրիշ կերպ չ'պիտի կրնանք ընել. քանի որ ուղիղ տրամաբանութիւնները ու լաւ գատողութիւնները քեզ դիտող մէկ մէկ ձգտեալ լրտեսներ՝ քեզ զատապարտող զօրեղ փաստեր գարձեր են. հետեւաբար մինք ալ կը հետեւինք օրը օրին գէթ զերծ մնալու համար անոնց աչալուրջ հսկողութիւնէն:

Վստահ եմ թէ այս տողերը կարգալէք յետոյ զիս կատարեալ յոռետես մը պիտի նկատես, և կամ պիտի կարծես թէ՛ հարբուխէս տնտիջապէս յետոյ յոռետեսի մը սեւ մտածումները սպրդած ըլլան գլխու մէջ, և միթէ իրաւունք չունի՞մ յոռետես մը ըլլալու, երբ իրա-

— Արագուիլ ինձ կ'ուզու որ ընեն երկու հազար տուրք:

— Ստա՛կը:

Արագուիլ հասկցած էր...

— Թող աղքատներուն տրուի, գերեզմանիս վրայ խաչ մը իսկ չ'եմ ուզեր:

Եւ զինքը հետեւորդող զինուորներու ջոկատը ցցնելով ըսաւ.

— Ինձի համար են ասոնք, չէ՛:

— Արագուիլ՛. զինուոր մը թոյնով չ'են մեռցնիր, պատասխանեց Կարբիսօ:

Այն տեսն ժուան Արագուիլ խաչ հանելով քահանային առջեւը ծնորդից և բարձրաձայն ըսաւ « Թող Աստուած ներէ՛ ինձի »:

Հիմա ալ Հէրնանիի զանգակները, լուսնադաշտին մէջի. բլուրներուն անդին կողմի Սանթա-Պարպարային զանգակներուն պէս, մեռեալներու կոչնակը կը հնչեցնէին:

Ժուան ոտքի ելաւ, թիկնոցակին գրպանէն սիկարէթ մը առաւ. — Մուքորրակային սիկարէթը — և յիսնապիտէն կտոր մը կրակ ուզեց: papelito ն վառեց, շրթունքներուն մէջ դրաւ, վերջին նայուածքով մը Բէրան բարեւեց, որ չարժեւ մը ըրաւ դէպի անոր երթալու համար, բայց մէկէնիմէկ տեղը անյողազող մնաց և խոչոր, գեղեցիկ երիտասարդ տխուր ժպիտով մը ժպտելով՝ ձակատը վերցուց ու զինուորներուն շրջանակին մէջ մտաւ. Կարբիսօ նըչան ըրաւ... Բէրա նո գարձաւ, ջանաց զայն սեանելու, նորէն տեսնելու, ալ բան մը չ'կըրցաւ տեսնել հրացաններու շրջանակին մէջ, որք եկեղեցիին երկայնքէն կը հեռանային, միայն

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԵՆԿԵՐ

Պատարի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց , Գաֆէ Տը Լա Պուրսի կից .

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներս են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վկայականներով եւ մեքայններով վարձատրուած , Երաշխատեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ

ԱՐԲՈՒՆԻՐԻՆ



ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,

ուշագրութիւն դարձնել իւ-

րաքանչիւր մեքենայի վրայ

ՍԻՆԿԵՐ ի յատկանշին :

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Չրի դասեր և նորոգու-
թիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենա-
յից համար , յաճախորդաց
տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններն մեքենայից
եւ նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ուսնքի եւ անիրաւութեան նժարին մէջ , զօ-
րեղ ձեռքեր մեշա ջանքեր կ'ընեն անիրաւու-
թիւնը ծանրացնելու . . . Երբ օրէնքները ար-
գարը անիրաւ կը դասեն ու անիրաւը ար-
ցար . . . Երբ Գօնվանսիօնէլի պէս խորհող մար-
դու մը հսկայ խօսքերը եւ ամենի մտածումները
այսօր lettre mort ըլլալով կը մեռնին . . . Երբ
Փանթին իր մէկ հասիկ սրտին հատորը , Գո-
զէթը խնամելու համար կ'ստիպուի մաղերը կըտ-
րելով ծախել ու իր ակամները փոխանակել կը-
տոր մը սնունդի գինը եղող չնչին ֆրանքներու
փոխարէն , Երբ անգութ Բրիտանիոյ ափ մը
ժողովուրդը ճգմել կ'աշխատի իւր հզօր երկաթէ
ձեռներուն մէջ , որոնց միակ յանցանքը ազա-
տասէր ըլլալնին է , եւ վերջապէս երբ գահիճն
Համիտ երեք հարիւր հազարներու արիւնը ծը-
ծելէ վերջ զեռ անպատիժ կը մնայ . . . ալ Բ'նչ
լաւատեսութիւն կրնաս սպասել ինձմէ . . .

Չգիտեմ ո՞ր ինչպատակը բեր է թէ՛
յոռետեսութիւնը լաւատեսութեան փարոսը եւ
կամ՝ ջերմաչափն է , պահ մը մտածեցի այդ
փարոսին լոյսովը փնտռել ու գտնել այնպիսի
դէմքեր , որոնք կարող ըլլային առաջնորդել
զիս դէպի լաւատեսութիւն :

Գիտե՞ս սիրելի բարեկամս թէ՛ ինչո՞ր գը-
տայ այդ լոյսով , թէ՛ եւ պիտի զարմանաս այս
գիւտին վրայ , բայց հոգ չէ . միեւնոյն փորձը
դու ալ կատարելով կրնաս հասնիլ իմ եզրակա-
կացութեանս . նախ փոքրաւորներու սհազին
երամիտ , որոնք ասդին անդին կը վազուըռ-
տէին , իրենց ստացած պատգամները հաղորդե-
լու համար ստորագրակներուն , երկրորդ Հիւ-
կոյի եւ Շէքսպիրի վերարկուներուն մէջ պըլ-
լուած նասրէտտին Հօճաներ , որոնք հոս ու հոն
չուքերու տակ , մութին մէջէն տապալել կ'աշ-
խատէին իրենց ատելութեան առարկան . եր-
րորդ պատույ յարգանքի թիկնածու էմիլ Զօ-
լայի imitationներ :

Ալ երեւակայէ սիրելիս , այս դէմքերն էին
որ զիս պիտի առաջնորդէին դէպի լաւատեսու-
թիւն . . . ա՛լ բոլորովին փնտռելէ յուսահատ
(յուսահատութիւնը մարդուս սկարութեան մէկ
ապացոյցն է) քաջուեցայ դարձեալ յոռետեսու-
թեանս մութ անկիւններուն մէջ , յառաջիկային
թողով աւելի մանրակրկիտ խուզարկութիւն
մը , պատելով նաեւ յուսոյ փոքրիկ նշուլիկ մը
սրտին մէջ . . .

Ցտեսութիւն
Քոյր
ԱՐՏԱՇԷՍ ՄՍՐԼԵԱՆ

կտոր մը կապոյտ մուխ տեսաւ , կապոյտ մուխ
մը՝ որ գլուխներու եւ սուրկներու փարիմանց
մէջէն կը բարձրանար եւ պայծառ երկնքին մէջ
կը կորուէր :

Ու երգերը , աղօթքները կ'սկսէին եկեղե-
ցիին մէջ . մինչդեռ անդին , շիկապոյն պատին
երկայնքը , արեւին տակ ժուան Արագուիլ սի-
կարէթին վերջին շունչը կը ծծէր :

Բէքա , մահուան միւս լուծեան մէջէն որ
հրապարակին վրայ կը սաւառնէր , հեռուոր հը-
րաման մը լսեց եւ միեւնոյն ժամանակ հրա-
ցաններու շաչիւն մը , ապա որոշապէս այս բառը
հասաւ ականջին :

« Կրա՛կ . . . »
Մունկի վրայ ինկաւ ընկ , ճուած բարձր
ձայնով սկսելով « Հայր մեր որ յերկինս ես . . . »

Բայց հրացաններու միահողոյն որոտը մէ-
կէնիմէկ աղօթքը կտրեց . ժուան Արագուիլ , զեռ
եկեղեցիին պատին երկայնքը կ'ան դուռն , կուրծքը
արիւնով շաղախուած ականթարթի մը մէջ գետին
կը տապալէր :

Երբոր յիսնապիտը անոր մօտեցաւ , քուն-
քին , վերջին հարուածը (coup de grâce)
տալու , ժուանի երկու մասներուն մէջ բռնած
սիկարէթէն — Մուքարրակայի սիկարէթը — զեռ
կապոյտ ծուխի ոլորտ մը կը բարձրանար եւ
այդ ծուխը միայն կ'ապրէր զեռ Մուքարրակա-
յէն — հերոսէն — եւ Արագուիլէն — մարդասպանէն . . .

Թարգմ . Լեւոն

Տարագրութիւն ԺԱՂԻՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏԻՊԻՆ ՍՈՑԻԱ ԱՋԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Ապսխը-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն
փոխադրած է Շարա Ապսխը Ազիզ , Ալի փաշա
Շէքրիֆի պարտիզին դիմաց , Ահմէտ պէյ Ապ-
տիւլ Բաղդիւր 20 թիւ սեփականութեան մէջ :

Տիպին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձա-
նութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ
ըլլալով գահիթերնակ ազգայնոց եւ նոյն իսկ
օտարաց , աւելորդ կը համարուի զայն յանձնա-
րուել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի
զարմանում :

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ
(ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂԵԻ
նիքէլ , կոթէն լաւուղ սիրուն ժամայոյց-
ներ որոց լաւ բանիլը երաշխաւ տեսաւ է :
Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամայոյցներ
120 ՂԵԻ տեսաւ մինչեւ 2500 ՂԵԻ , Կոն-
պէս նաեւ արծաթ ոսկեպատ , նիքէլ , Լ . ք . ք .
սիտէ ժամայոյցներ . պատիւ եւ քօնալի բոլ-
մազան Բանտիլներ եւ ամեն ճաշակի յուր-
մար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեայի միօ .
նօկրաֆիներու :

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՊՏՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ
եւ է ընկերութեան մէկ միլիարդ աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
ի Գահիթէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ «ԱՐՇԱԼՈՅՍԻ» ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱՋԻԶԻ ՍԿԻՂԸ
Օսմանիէի ղեկարանին ղիւնացի փողոցին մէջ .

Ժողովրդական տպարանին մէջ կը պատ-
րաստուին .

Այցեխարտեր , Երաշխարհանքներ , Գիրքեր ,
Հրատարակներ , Մահազդներ , Տեղեկագիրներ ,
Կանոնագիրներ , Տոմսեր և այլ և այլ տպար-
անի վերաբերեալ յանձնարարութիւններու
կը վաճառուին հետեւեալ գրքերն .

1. ԲՆԱՇԽԱՐՀԻ ԲԱՌԱՍՄԱՆԻ Ա . Ե Բ .
պրակտիկներ , որոնք նոր հասած են և որոց
մասին արդէն խօսուած է « Արշալոյսի » մէջ :
2. ՈՐԲՈՒՆԻ , որ նոյնպէս նոր հասած
է և որոյ ի Թուրքիա մուտքը , ինչպէս կը
լսենք , արդիւնուած է եղեր :
3. ՀԱՄԱՐԱՅԻՆ ՀԱՅՈՅ Ժողովրդական
երգերու , Փարիզ տպագրեալ , Տնօրինու-
թեամբ Տ . Լեւոն Եղիազարեանցի :
4. ՉՈՒՍՐՃԱԼԻ Անիթթոսներ և ժո-
ղովրդական վէպիկներ կամ Մարդկային
կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարա-
կութիւններ :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ըն-
կերութեան աւելի երաշխաւորութիւններ ,
ընդարձակ գործառնութիւններ և հրուպու-
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործա-
կատար յԱզեքսանգրիա